

ՀՏԴ 725.31.057:712.7

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ն.Տ. Բարսեղյան

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՔԻ ՁԵՎԵՐԸ ՄԵՐՁՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ
ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԵՋ**

Բերվում են մերձձանապարհային սպասարկման միջավայրին բնորոշ ճարտարապետական փոքր ձևերի և շինությունների օրինակներ, տրվում է դրանց դասակարգումը՝ ըստ գործառնական նշանակության, դերն ու կարևորությունը սպասարկման միջավայրում, ինչպես նաև տրվում են առաջարկություններ՝ վերջիններիս առավել նախընտրելի իրավիճակներում կիրառելու համար:

Առանցքային բառեր. *մերձձանապարհային սպասարկման օբյեկտ, լանդշաֆտ, փոքր ճարտարապետական ձևեր, ճարտարապետական համալիր*

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության և հանգստի կազմակերպման ինդուստրիայի զարգացումը պայմանավորում է մերձձանապարհային սպասարկման (ՄՃՄ) բարձր մակարդակ: Տեղին է ասված՝ հանրապետության այցեքարտը ձևավորվում է հենց այցելուների սպասարկման միջավայրում, իսկ հանրապետությունից և տարածաշրջանից ստացած տպավորությունը մեծապես պայմանավորված է այցելուների տրանսպորտային, հյուրանոցային, հանգստի, մշակութային, սպորտային և այլ սպասարկումների կազմակերպման, այսինքն՝ հյուրընկալման մակարդակով:

Մերձձանապարհային սպասարկման միջավայրում մեծ է ճարտարապետական փոքր ձևերի նշանակությունը: Որպես կանոն, դրանք այցելուների բազմաբնույթ սպասարկման գործընթացի անբաժանելի մասն են կազմում, դրսևորվելով առավելապես գործառնական և գեղարվեստական առումներով: Սովորաբար կարևորվում են տեղեկատվական, խորհրդանշական, գեղագիտական, հանգստի, ժամանցի, մշակութային միջոցառումների կազմակերպման և այլ առումներով:

Հորինվածքային տեսանկյունով դրանք դեկորատիվ արվեստի և ճարտարապետության ձևեր են՝ տաղավարներ, հանգստի և զվարճանքների վայրեր, վահանակներ, ջրային մակերեսներ, սահքի, մագլցման հարմարանքներ և այլն, հանդես գալով ինչպես զուգակցված, համատեղված, այնպես էլ՝ առանձին հորինվածքներով:

Մերձձանապարհային սպասարկման միջավայրի հարմարավետությունը և գեղարվեստականությունը ձեռք է բերվում ոչ միայն դրանում ընդգրկված օբյեկտների նպատակահարմար լուծումների միջոցով, այլ նաև փոքր ճարտարապետական շինությունների, քանդակի, դեկորատիվ արվեստի և ճարտարապետական այլ փոքր ձևերի կիրառմամբ, ինչպես նաև դրանց նյութի, գույնի, մակատեսքի, լուսավորության ճիշտ ընտրությամբ: Տարածքի ձևավորումը, ինչպես նաև ճարտարապետության բնապատկերային լուծումը ներառվում է

առանձին օբյեկտների և դրանցով կազմված համալիրների, նաև շրջակա հարակից տարածքների, ինչպես նաև ներքին ձևավորման, բարեկարգման, ճարտարապետագեղարվեստական միջոցառումների մեջ:

Կառուցապատման և բարեկարգման համալիր լուծումը շեշտում է ճանապարհամերձ սպասարկման օբյեկտների գեղարվեստական արտահայտչականությունն ու բազմազանությունը, թույլ է տալիս ստանալ կատարյալ ճարտարապետական համախումբ, հասնել միջավայրի առավել հարմարավետության և ներդաշնակության: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է մշակել ՄՃՍ օբյեկտների գեղարվեստական ձևավորման գլխավոր սխեմա՝ առանձին հատվածների և դրանց միջև գոյություն ունեցող ճարտարապետագեղարվեստական փոխադարձ կապի ու գործառույթների մանրամասն դրսևորմամբ: Պետք է առավելագույնս հաշվի առնվեն օբյեկտի դերն ու նշանակությունը տվյալ սպասարկման համակարգում կառուցապատման վայրի սոցիալ-տնտեսական, կլիմայական առանձնահատկությունները, ինչպես նաև ճարտարապետական լուծման ու տարածքային հորինվածքի առանձնահատկությունները:

Արտաքին բարեկարգման տարրերը, կախված դիրքից և գործառնական նշանակությունից, պետք է ստեղծեն հարմարակեցության մթնոլորտ, կենսուրախ միջավայր, նպաստավոր պայմաններ, հանդիսավորություն, տոնականություն, հաղորդակցման համար անհրաժեշտ պայմաններ՝ ընդհանուր շփման հատվածներում, հրապարակներում և այլն:

ՄՃՍ օբյեկտի կամ դրանցով կազմված համալիրի կառուցման ժամանակ արտաքին բարեկարգման տարրերը պետք է հաշվի առնեն շրջակա միջավայրի առանձնահատկությունները, պահպանեն բնականությունը, առավելագույն չափով օգտագործեն լանդշաֆտի հնարավորությունները:

Բնության հետ ներդաշնակության պահպանումը հանդիսանում է փոքր ճարտարապետական ձևերի, դեկորատիվ արվեստի և ճարտարապետական հորինվածքային այլ միջոցների նախագծման և իրականացման գլխավոր չափանիշը: ՄՃՍ միջավայրում կիրառվող ճարտարապետության փոքր ձևերը բաժանվում են հետևյալ խմբերի.

- դեկորատիվ տարրեր (դեկորատիվ քանդակագործություն, պատեր, դեկորատիվ քարեր, սկահակներ, ծաղկամաններ),
- հուշակառույցներ,
- տեղեկատվության աղբյուրներ, վահանակներ, ցուցանշաններ, գովազդային և թերթի ցուցափեղկեր,
- գեղարվեստագործառնական հարմարանքներ (ծածկեր, ձյունից և անձրևից պատսպարող ստվերոտ տաղավարներ, բույսերով ծածկված վանդակաճաղեր, ցայտաղբյուրներ, լողավազաններ՝ կանոնավոր արևահարման և ջերմախոնավացուցիչ ռեժիմով, աղբամաններ):

Անցյալում ճանապարհամերձ կառույցների մեջ լայն տարածում ունեին աղբյուրների, ջրհորների, տաղավարների, աստիճանների, հենապատերի, դարպասների, մառանների, մուտքերի և հուշային նշանների ճարտարապետական մշակումները:

Պահպանելով հիմնական ավանդույթները՝ ժամանակակից ճարտարապետական փոքր ձևերը և մոնումենտալ դեկորատիվ արվեստի նմուշները պետք է բնութագրվեն գեղարվեստական արտահայտչականության նոր գծերով, շրջապատող իրականության նկատմամբ բարեփոխումներով, կառուցման մեթոդներով և ճարտարապետագեղարվեստական ձևերով: Բացի այդ, փոքր ճարտարապետական ձևերի բնույթը պետք է ենթարկվի տվյալ վայրի բնաշխարհագրական և պատմական առանձնահատկություններին, ինչպես նաև հմտորեն օգտագործվի տեղական շինարարական նյութը՝ իր գունային և դեկորատիվ հատկանիշներով: Եթե նախկինում ջրհորները, խուլ բարձր դարպասները զգալի տեղ էին զբաղեցնում ճարտարապետական համապատկերում, ապա ժամանակակից կենտրոնացված ջրամատակարարման համակարգի գոյությամբ վերացել է ջրհորների անհրաժեշտությունը, իսկ ցանկապատները և դարպասները ձեռք են բերել այլ գործառնական ու գեղարվեստական նշանակություն:

Տեղեկատվության ժամանակակից տարրերի, գովազդային ցուցափեղկերի, զանազան ցուցանակների, խորհրդանիշների և այլնի ներառումն այս տիպի օբյեկտներում հաճախ նսեմացնում է հորինվածքային ամբողջականությանը [1]:

Կառուցման տպավորության և ուժգնացման հասնելու հարցում զգալի դեր են խաղում գեղագիտական արվեստի տարրերը, իճանկարային որմնապատկերները, ճակատների հարդարանքը, որտեղ ազգային ավանդույթների ստեղծագործական կիրառումը կարող է արդյունավետ լինել: Գեղագիտական առումով ոչ պակաս կարևոր են քանդակները և հուշակոթողները:

Նուգական ներգործության և գեղարվեստական արտահայտչականության ուժեղացումը ձեռք է բերվում կառույցների հորինվածքներում ջրապատ տարածությունների ակտիվ ներգրավման, բնական ջրավազանների օգտագործման, արհեստական՝ ոչ մեծ լճակների, ջրապատվարների և թմբերի կառուցման միջոցով: Գետերի, արհեստական լճակների, բնական ջրավազանների օգտագործումը՝ որպես փոքր ճարտարապետական կառույցների ակտիվ բաղադրիչներ, կարող են մեծապես հարստացնել միջավայրը՝ դրան տալով անհատականություն և յուրատիպություն, դառնալով լիցքավորման և գեղարվեստական ներշնչանքի աղբյուր:

Նարթ ջրային մակերեսով ջրավազանի նախագծման համար առաջին հերթին անհրաժեշտ է հաշվի առնել դրա արտացոլման հատկանիշը: Պետք է նկատի ունենալ ջրավազանը շրջապատող բնությունը և ճարտարապետական տարրերը, որոնք արտացոլվելու են ջրավազանում:

Հանդարտ ջրում, որպես կանոն, մեծ ուշադրություն է դարձվում նաև ջրային մակերեսի հատակի գեղարվեստական ձևավորմանը: Դրա համար տեղին է օգտագործել գորշաճերմակ գլաքար, փոված հատակներ, դրանց արանքում՝ հղկված գետաքարեր և ջրային բույսեր: Հոսող ջրի պարագայում պետք է նկատի ունենալ ջրի ձայնը, ձևի, գույնի, փայլի փոփոխությունները:

Կառուցվածքով և նյութով բնականին նման արհեստական առվակները ցանկալի է ունենալ զբոսանքի ճանապարհին կից՝ ոչ մեծ ջրվեժների և կամրջակների համադրությամբ (նկ.1):


ՄՃՍ օբեկտների կապը բնության հետ ամրանում է նաև կառույցներով, որոնք ամբողջովին համապատասխանում են տեղանքի ռելիեֆին: Առավել տպավորիչ և արտահայտչական է, երբ կառույցը բնականորեն իջնում է բլուրների լանջերով, գետի, լճի ափերով կամ ձորակի եզրերի երկայնքով:

Այնտեղ, որտեղ տեղամասի հիմնական բնական գեղարվեստական արժեք է հանդիսանում ռելիեֆը, փոքր ճարտարապետական շինությունները դառնում են ստորադաս՝ կոչված ուժեղացնելու բնության կողմից ստեղծված գեղագիտական մթնոլորտը (նկ.1):

Հետիոտնի շարժման համար բարեկարգման ժամանակ մեծ նշանակություն է տրվում սանդուղքներին, աստիճաններին, թեք հարթակներին, հենապատերին և այլնին, որոնք կարող են լինել քարե սալիկներից, բլոկներից, աղյուսներից, փայտից, բնական քարաբեկորներից: Սանդուղքներին մեծ գեղարվեստականություն է հաղորդում աստիճանների համադրությունը տարածվող բույսերի, ծաղիկների, խոտե ծածկոցների, զառիթափերի և հրապարակների հետ: Հիանալի դեկորատիվ արդյունք է տալիս քարե հորինվածքների, ջրավազանների ու ջրասեր բույսերի համադրությունը:

Անբաժանելի տարրեր են փոքր ճարտարապետական ձևերը, քանդակները, մոնումենտալ գեղանկարչության նմուշները, որոնք այլ տեսակի բարեկարգման և կանաչապատման նմուշների համադրությամբ սպասարկման օբեկտներին ու համալիրներին տալիս են ճարտարապետական ամբողջականություն և անհատականություն (նկ.1):

Տարածքում քանդակային լուծումներով կարելի է հասնել զգալի գեղարվեստագեղագիտական արդյունքների, նպաստել միջավայրի հորինվածքային միասնության ստեղծմանը: Գլխավոր հարթակների սալարկման համար խորհուրդ է տրվում օգտագործել գունավոր և սպիտակ սալիկներ, շերտաքարեր, գունավոր ասֆալտաբետոն: Գեղարվեստական ձևավորման ժամանակ պետք է խուսափել մեկ տեղում մեծ քանակությամբ և տարբեր հատկություններով փոքր ճարտարապետական ձևերի կենտրոնացումից, որոնք կարող են խախտել միջավայրի ճարտարապետական ներդաշնակությունը: Ճարտարապետական ամբողջականության հասնելու համար փոքր ձևերի կիրառման ժամանակ հաշվի են առնվում դրանց մասշտաբայնությունը, ձևը, շինանյութը, մակատեսքը և գույնը՝ ընտրությունը կատարելով ըստ տեղադրման վայրի և գործառնական նշանակության:




Նկ.1. Արհեստական առվակների, ջրվեժների, փոքր կամուրջների, քանդակների, բույսերով ծածկված տաղավարների կիրառման օրինակներ ՄՃՍ օբյեկտներում

ՄՃՍ համալիրների կենտրոնի մաս հանդիսացող փոքր ճարտարապետական տարրերն ավելի նպատակահարմար է կառուցել հետիոտնի շարժման ուղիների միջև, կղզյակներում, շենքերի անկյուններից դուրս, խուլ պատերի ֆոնի վրա և մուտք տանող ուղիների կողքին, ընդ որում դրանցից յուրաքանչյուրը պետք է տեղադրել միջավայրի հանդեպ որոշակի շրջահայեցությամբ: Լայն տարածում ունեն նաև սողացող բույսերով ծածկված տաղավարները, ծաղկանոցները, ցանկապատները, դռնակները, լապտերները և այլ փոքր ճարտարապետական տարրեր, որոնք տեղակայվում են ընդհանուր հորինվածքում (նկ.1):

ՄՃՍ օբյեկտներին բնորոշ փոքր ճարտարապետական տարրերից են ջահերի սյուները, պարիսպները, նստարանները, ցուցանշանները, հանգստի հարթակները, զանազան ձևի և գույնի ճանապարհաձևերը, մայթերը՝ իրենց կանաչապատ համադրություններով: Հետիոտնի ծառուղիները և հրապարակները ունենում են զանազան գույնի և մակատեսքի ծածկույթներ՝ պատրաստված սալիկներից, աղյուսներից, հղկված գետաքարերից, գլաքարերից և այլն (նկ.2):


Օբյեկտի մուտքի մոտ, որպես կանոն, տեղադրվում է մուտքի նշանը, տնտեսության խորհրդանիշը, որում դրսևորվում են տնտեսության ուղղվածությունը, բնութագրական կողմերը, ազգային ավանդույթները և այլն :

Մանկական հրապարակների ճարտարապետական բարեկարգումը և փոքր ձևերը միտված են երեխայի աշխարհահայացքի ձևավորմանը և ներդաշնակ զարգացմանը: Դրանք պետք է գայթակղեն երեխային, հետաքրքրություն առաջացնեն դեպի խաղերը, դաստիարակեն իմացություն, սեր դեպի աշխատանքը, բնությունը և գեղեցիկը: Այս առումով կարևոր է, որ խաղասարքերը (մագլցման պատերը, վազբուղիները, ճոճանակները, ավազարկղերը և այլն) վերածվեն գեղարվեստական իմաստավից արժեքների:



Նկ.2. ՄՃՍ օբյեկտներին բնորոշ կահավորման օրինակներ

Հրապարակների կառուցման և տարբեր խաղային սարքերի ստեղծման համար հաճախ օգտագործում են այնպիսի նյութեր, ինչպիսիք են ծառերի լայնակի կտրվածքները, բնական կոպտատաշ քարերը, ցախը, եղեգնը և այլն, որոնցից պատրաստում են զանազան խրճիթներ, հյուղակներ՝ առավել ներդաշնակորեն համադրված բնության առանձնահատկություններին [2] (նկ.3):



Նկ.3. Փոքր ճարտարապետական ձևեր և շինություններ՝ մերձհանապարհային սպասարկման օբյեկտների հանգստի գոտիների և մանկական խաղահրապարակների համար

Փոքր ճարտարապետական ձևերի կապը բնության հետ ՄՃՍ օբյեկտների ճարտարապետության գլխավոր առանձնահատկություններից մեկն է: Դրա հետ միասին խաղահրապարակների արհեստական տարրերը, շինությունները, կերպարները միջավայրի ակտիվ բաղադրիչներ են, որոնք կարող են հետաքրքրություն, անսպասելիություն, ճաշակ և իմացություն ներարկել երեխաներին:

Մեծածավալ կառուցապատման ժամանակ ճարտարապետական միասնության հասնելու համար հիմնական հորինվածքային միջոցների հետ միասին մեծ նշանակություն են ձեռք բերում գույնը, դեկորացիաները, խորհրդանշանները, քանդակային խմբերը: Այդ իսկ պատճառով

ճարտարապետագեղարվեստական ձևավորման սխեմաների մշակման ժամանակ գունային լուծումները պետք է լինեն պարտադիր և ելնեն ընդհանուր գունանկարչական երանգավորումից, ինչպես նաև առանձին շենքերի, կառույցների, փոքր ձևերի ու այլ տարրերի գունային ներդաշնակության և փոխկապակցության սկզբունքից: Մեկ ճարտարապետագեղարվեստական հորինվածքի մեջ պետք է համադրվի կառույցի, միջավայրի և փոքր ճարտարապետական տարրերի գունաշար, ծառայի որպես տրամաբանական հավելում և ողջ ճարտարապետական հորինվածքի ավարտ:

Հորինվածքային միասնության պայմանը կառուցապատման և բնության միջև օրգանական ներդաշնակության ստեղծումն է, որի համար պահանջվում է ճարտարապետական փոքր ձևերի և կառույցների ծավալատարածական հորինվածքի, մասշտաբի, գունային երանգների և այլ բաղադրիչների մանրակրկիտ ընտրություն:

Н.Т. Барсегян

МАЛЫЕ АРХИТЕКТУРНЫЕ ФОРМЫ В ЗАСТРОЙКЕ ОБЪЕКТОВ ПРИДОРОЖНОГО СЕРВИСА

Приводятся характерные для объектов придорожного сервиса примеры малых архитектурных форм и строений, их классификация по функциональному назначению и значимость в среде сервиса, а также даются предложения по их применению в наиболее предпочтительных ситуациях.

Ключевые слова: *объект придорожного сервиса, ландшафт, малые архитектурные формы, архитектурный комплекс*

N.T. Barseghyan

SMALL ARCHITECTURAL FORMS IN THE CONSTRUCTION OF ROADSIDE SERVICE OBJECTS

The thematic example for roadside service objects of small architectural forms and structures is brought, their classifications on the role of a functional purpose are given. Their application in the most preferred situations is suggested.

Keywords: *roadside object, landscape, construction, small architectural form*

Գրականություն

1. **Виншу И.А.** Формирование архитектурно-планировочной структуры сельских населенных пунктов в России с 20-х годов XX века. - Самара, 2005.
2. **Нефедов В.А.** Ландшафтный дизайн и устойчивость среды. – СПб., 2002.

Աշխատանքն իրականացված է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ «ՀՀ ճարտարապետական և շինարարական համալիրների կայուն զարգացման ուղիների բացահայտում, ճշգրտում, ներդրման առաջարկությունների և հանձնարարականների մշակում՝ մշտական մոնիտորինգի կիրառմամբ» ծրագրի շրջանակներում:

Բարսեղյան Նարեկ Տիգրանի (ՀՀ. ք. Երևան) – ՃՀՀԱՀ, ակ. Ալ. Թամանյանի անվ. Ճարտարապետության և շինարարության պրոբլեմների լաբորատորիա, կ.գ.ա., Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման և վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոն, ասպիրանտ, (093) 888030, narek_barseghyan@mail.ru:

Барсегян Нарек Тигранович (РА, г. Ереван) - НУАСА, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. акад. Ал. Таманяна, м.н.с., кафедра Теории архитектуры, реставрации и реконструкции историко-архитектурного наследия, изящных искусств и истории, аспирант, (093) 888030, narek_barseghyan@mail.ru.

Barseghyan Narek Tigran (RA, Yerevan) – NUACA, Research Laboratory of Architecture and Construction by Academician Al. Tamanyan, junior scientific researcher, Chair of Theory of Architecture, Restoration and Reconstruction of Historical Architecture Heritage, Fine Art and History, post graduate student, (093) 888030, narek_barseghyan@mail.ru.

Ներկայացվել է՝ 16.10.2014

Ընդունվել է տպագրության՝ 17.10.2014